

Խմբագրական

ՏԱՐԵՎԵՐՁԻՆ՝ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՏՈԳՈՐՎԱԾ

Վերջին տարիներին Հայաստանի տարածքային կառավարման նպատակների, տրամաբանության և կառուցվածքի փոփոխությունները հիմնականում պայմանավորված են 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով, ինչպես նաև երկրի 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության ընդունմամբ և ընթացքի մեջ գտնվող՝ համայնքների խոշորացման բարեփոխումների գործընթացով:

Եվ քանի որ ընդունված է աստղագիտական տարին ավարտել առավելապես լավատեսությամբ, ոլորտի թերացումների ու բացթողումների վերլուծությունն ու գնահատումը տեղափոխելով գալիք տարի՝ այժմ սահմանափակվելը միայն ձեռքբերումներով և առաջընթացին միտված հնարավորությունների թվարկումով:

2017 թվականին տեղական ինքնակառավարման համակարգում բուն զարգացումներ տեղի ունեցան, որոնք նշանակալից և կանխորոշ կարող են լինել ոլորտի հետագա զարգացման համար:

Անցնող տարին մեկնարկեց համակարգի համար թերեւս ամենանշանակալից իրադարձությամբ. ուժի մեջ մտավ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ:

Կյանքի կոչվեց եւս մեկ օրենք՝ շարադրված նոր խմբագրությամբ, «Տեղական տուրքերի և վճարների մասին», որն իսկապես լուրջ թարմացման կարիք ուներ:

Փոփոխությունների ենթարկված օրենքերից բացի, տարին նշանավորվեց նաև «Ֆինանսական համահարթեցման մասին» նոր օրենքով, որը հանրապետության համայնքների կյանքում անփոխարինելի դեր կարող է ունենալ, քանի որ ներմուծում է պետության կողմից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման նոր տրամաբանություն:

Օրինաստեղծ գործընթացն անցնող տարում չի սահմանափակվել նոր կամ նոր խմբագրությամբ շարադրված օրենքների ընդունմամբ. Անցնող տարում նախապատրաստվել և հանրային քննարկումների փուլ են ապրել «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի, «Տարածքային կառավարման մասին» հայեցակարգի և «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագծերը, ինչպես նաև ընդունվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Անցնող տարում շարունակվեցին երկար ժամանակ քննարկված և սպասված, երկու տարի առաջ Հայաստանում սկիզբ առած վարչատարածքային բարեփոխումները, որոնք ռազմավարական նշանակություն ունեն տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի հետագա զարգացման հարցում: Նոյեմբերի 5-ին ՀՀ մեծ թվով համայնքներում, այդ թվում՝ վարչատարածքային բարեփոխումների 3-րդ փուլով խոշորացված 34 համայնքներում, տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները:

Հասկանալի է, որ իրականացվող օրենսդրական և վարչատարածքային բարեփոխումներն ինքնակառավարման և կառավարման համակարգում լիազորությունների ապակենտրոնացման պետական նոր քաղաքականության մշակմանը և իրականացմանը: 2017թ. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը մշակեց և կառավարական ու ոչ կառավարական շահագրգիռ կողմերի քննարկմանը դրեց գալիք տարիների «Ապակենտրոնացման ճանապարհային քարտեզը»: Ապակենտրոնացման գործողությունների միջնաժամկետային պլանով նախատեսվում է պետական (այդ թվում՝ տարածքային) կառավարման մարմինների մի շարք լիազորություններ ապակենտրոնացնել դեպի տեղական ինքնակառավարման մարմիններ: Դրանք առայժմ առնչվում են հանրային կառավարման մի քանի ոլորտների, մասնավորապես՝ առողջապահության, սոցիալական պաշտպանության, կրթության, մշակույթի և սպորտի, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության, գյուղատնտեսության, զբոսաշրջության և այլն, բայց այս ոլորտներում ապակենտրոնացման քաղաքականության իրականացումը կարելի է լավ սկիզբ համարել հետագա տարիներին ապակենտրոնացման խորացման և դրա շրջանակների ընդլայնման համար:

Որոշակի բարեփոխումների առաջին քայլեր են նկատվում նաև ֆինանսական ապակենտրոնացման բնագավառում, մասնավորապես՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) կատարելով՝ 1997 թվականից ի վեր գործող կարգի կատարելագործման, թափանցիկության ապահովման, տեղական հարկերի գործող տեսակների վերասահմանման ու նորերի սահմանման և այլ ուղղություններով:

Անհնար է չհիշատակել 2017թ. նոյեմբերին ստորագրված «ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին» համաձայնագիրը, ինչը վավերացումից հետո նոր հեռանկարներ է բացում հանրային կառավարման համակարգի համար՝ ընդհանրապես, և հանրային հատվածում կենսական անհրաժեշտություն ունեցող ապակենտրոնացման գործընթացների ակտիվացման առումով՝ մասնավորապես:

Վերջ թվարկված իրադարձություններն են, որ նախանշում են գալիք տարվա զարգացումները. նման հարուստ նախադրյալներով և ռեսուրսների ռացիոնալ օգտագործմամբ՝ 2018-ը կարող է իրապես լինել արդյունավետ և նոր նվաճումների տարի՝ հավատ ներշնչելով ապագայի հանդեպ:

«Համայնք-ՀամաՏեղ» թերթի խմբագրական խորհուրդ

«ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԵՋ ԱՄՐԱՊՆԴԵԼ ՏԻՐՈՋ ԶԳԱՑՈՒՄԸ, ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՏԵՐ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԶԳՏՈՒՄԸ»



2017թ. դեկտեմբերի 9-ին Դիլիջանում կայացավ ՀՀ համայնքների խորհրդաժողովը, որի ժամանակ ելույթ ունեցավ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը: Ընդհանրապես ներկաներին նոյեմբերի 5-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների կապակցությամբ, Նախագահն ընդգծել է, որ դրանցով ամփոփվել է համայնքների խոշորացման գործընթացի հերթական կարեւոր փուլը: Վերջինս ցավով նշել է, որ տեղական մակարդակի ընտրությունները չեն արժանանում այն ուշադրությանը, որին հիրավի արժանի են, միաժամանակ բերելով այդ անուշադրության թերեւս ամենահավանական պատճառները՝ «այստեղ խնդիրները կոնկրետ են, իսկ այդ կոնկրետության, հստակ գործի տակ քչերն են ցանկանում մտնել», «հայաստանյան քաղաքական ուժերը թույլ են ներկայացված համայնքային մակարդակում և համարում են, որ այդ ընտրությունները երկրորդական են, սակայն քաղաքականությունն առաջին հերթին հենց տեղական մակարդակում է»:

Հատկանշական է, որ երկրի ղեկավարը մատնանշել է բազմաթիվ համայնքներում խոշորացման արդյունքում առավել մրցակցային ավագանու ձեւավորումը, ինչպես նաև՝ ավագանու կազմի ավելի շահագրգիռ և թիրախային դառնալու հանգամանքը:

Էջ 2 →

Համայնքների ֆինանսիստների միավորման հարգելի անդամներ,

Ընդհանրապես մեծ ձեռքով և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ:

2018 թվականին մաղթում են ձեռք առողջություն, երջանիկ կյանք և հաջողություններ, ինչպես նաև՝ գործունե մասնակցություն և շոշափելի ներդրում Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի կայացման և զարգացման, համայնքի կառավարմանը բնակիչների մասնակցության մակարդակի անշեղ բարձրացման գործընթացներում:

Թող 2018 թվականը նշանավորվի ոչ միայն ակտիվ գործունեությամբ, այլ նաև բերի այդ գործունեության ակունքները վայելելու բազմաթիվ պատճառներ և առիթներ:

ԿԱՅԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահ

← էջ 1

«ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԵՋ ԱՄՐԱՊՆԴԵԼ ՏԻՐՈՋ ԶԳԱՑՈՒՄԸ, ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՏԵՐ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԶԳՏՈՒՄԸ»

Նշվեցին նաև խոշորացման գործընթացն ուղեկցող այլ՝ դրական (ինչպես օրինակ, հաստիքների վերաբաշխման արդյունքում կրկնվող հաստիքների փոխարինումը նոր ծառայություններ մատուցող միավորներով) և բացասական երևույթներ (վերոնշյալ գործընթացի բացակայությունը):

Ս. Սարգսյանը կարեւորել է տեղական մակարդակում առավել մրցակցային միջավայր ստեղծելը՝ երկրի անկախության ամրապնդման համար անհրաժեշտ պայման համարելով պետության և հասարակության զարգացումը, որի համար «անհրաժեշտ է ինչպես կենտրոնաձիգ ուղղահայաց գործադիր կառավարում, այնպես էլ ապակենտրոնացված և ինքնակազմակերպվող, իրենց խնդիրները տեղում սահմանելու և լուծելու ունակ ուժեղ համայնքներ»:

«Միավորված, մեծ ռեսուրսներով օժտված և դրանք առավել արդյունավետ տնօրինող համայնքների և նրանց միջամայրաքային միավորումների փոխկապակցված շղթան մեր պետականության շարունակական զարգացման կարեւորագույն գրավականներից է: Մենք բնավ մեխանիկական համահարթեցման խնդիր չենք հետապնդում: Մեր խնդիրն է ոչ թե թուլացնել ուժեղ համայնքները, այլ ամրապնդել դրանք՝ զուգահեռ նոր հնարավորություններ ստեղծելով ավելի փոքր և թույլ համայնքների համար», - ասել է ՀՀ Նախագահը:

Որպես տեղական ինքնակառավարման մարմինները հետեւողականորեն ամրապնդելու ճանապարհ երկրի ղեկավարը նշել է քաղաքացիների և գյուղացիների մեջ հենց տիրոջ զգացումը, սեփական համայնքին տեր կանգնելու ձգտումը ամրապնդելը:

Իսկ գործնական ոլորտում՝ «անհրաժեշտ է որդեգրել համայնքների զարգացման և մասնավոր ներդրումներ ներգրավելու նորարարական մոտեցումները»: Սակայն, այնուամենայնիվ, համայնքին վերապահելով նախաձեռնող լինելու առաջնահերթությունը:

Համայնքի ամրապնդման հարցում կարեւորվել է լավագույն միջազգային փորձի վրա հենվելը՝ ներգրավելով բո-



լոր շահագրգիռ միջազգային կառույցներին: «Համոզված եմ, որ յուրաքանչյուր համայնք Հայաստան աշխարհի մանրակերտն է, որի կարողությունները չպետք է զիջեն երկրում արձանագրված ընդհանուր միջին մակարդակին», - ասել է Ս. Սարգսյանը:

ՏԻՄ ոլորտի հիմնախնդիրներից նշվել է հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների, տարածքային կառավարման միավորների և գործադիր իշխանության միջև գոյություն ունեցող խզումը: Նախագահը լուրջ բացթողում է համարել այն, որ «շահագրգիռ կողմերն ամեն կերպ խուսափում են առ-

կա հարցերն ու դրանց համար անհրաժեշտ լուծումները քննարկելու հնարավորությունից՝ նույնիսկ քննարկելու հնարավորությունից»:

«Բոլոր ծրագրերի մշակման և իրագործման փուլում պետք է իրականացվեն բազմակողմ շահագրգիռ քննարկումներ, որոնք ամբողջությամբ կներառեն և կարտացոլեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կարիքները»:

Իսկ այդ «նպատակներին հասնելու կարելու նախապայմաններից մեկը տարածքային կառավարման արդյունավետ համակարգի զարգացումն է», -

ասել է Նախագահը, նշելով, որ սահմանադրական նոր իրողություններից բխող՝ տարածքային կառավարման հարաբերությունները վերանայելու կարիք կա: Քանի որ անցումը խորհրդարանական կառավարման համակարգին պարտավորեցնում է վերափոխվելու պետական կառավարումը մարզերում՝ նոր օրենսդրական կարգավորումներ ստեղծելու և դրանց պրակտիկ իրականացմանը հետեւելու միջոցով: Նախագահը խիստ կարեւորել է մարզպետների ստանձնած դերակատարությունը՝ «հաղթահարելով դիտորդի և կառավարությունից համայնքների ղեկավարներին ինչ-ինչ հորդորներ և ուղեղներ փոխանցողի, պարզապես պասիվ համակարգողի կամ գուտ տեղական կառավարչի դերը»:

Պետության ղեկավարն իր խոսքում ընդգծել է, որ համայնքների կարողությունների զարգացումը հնարավոր է միայն համագործակցային և նպատակային աշխատանքի պարագայում, ներկաներին տեղեկացնելով, որ արդեն ավարտվել է տարածքային համալսարանի զարգացման նախապատրաստական գործընթացը՝ 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության, մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունների և 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագրերի ընդունումը, որով ամրագրվել են ակնկալվող արդյունքների կոնկրետ ցուցանիշները:

Պատրաստեց
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Ինչպես յուրաքանչյուր ոլորտում, այդպես էլ տեղական ինքնակառավարման համակարգում գործունեության թափանցիկության ապահովման կարեւորագույն նախապայմաններից մեկը բնակիչների մասնակցությունն է տեղական ինքնակառավարմանը: Այդ մասնակցության արդյունավետ ձևերից մեկը համայնքում տարբեր հարցերի շուրջ հանրային լուսնային կամ քննարկումների կազմակերպումն ու անցկացումն է, որը, ցավոք, ոչ միշտ է հետեւողականորեն իրականացվում:

ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի հոդված 84.2-ում նշվում է. «Համայնքի ղեկավարը մինչև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լուսնային կամ քննարկումներ Հայաստանի Հանրապետության օրենքի «Իրավական ակտերի մասին» հոդված 27.1-ի նով սահմանված ժամկետում: Հանրային բաց լուսնային կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն»:

Մանսօրինակ լուսնային կամ քննարկումների առավել արդյունավետ կազմակերպմանը օժանդակելու համար Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագիտական թիմը ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում մշակել է մասնակցության 3 կարգեր, որոնք ընդունվել և հաստատվել են ծրագրի թիրախային համայնքների ավագանիների կողմից:

Հիմք ընդունելով ՏԻ մասին օրենքի համապատասխան դրույթը և առաջնորդվելով վերոնշյալ մասնակցային կարգերով, ղեկտեմբերի 14-ին Մասիս քաղաքում կազմակերպվել էին համայնքի 2018թ. բյուջեի նախագծի քննարկումներ, որոնց մասնակցում էին համայնքի աշխատակազմի ներկայացուցիչներ, համայնքապետական կառույցների ղեկավարներ, բնակիչներ, ինչպես նաև ՀՖՄ փորձագետ Վահե Սարգսյանը:

Մասիսի փոխքաղաքապետ, 2018թ. բյուջեի նախագծի կազմման հանձնաժողովի նա-



խագահ Նորայր Հակոբյանը կարեւորեց բյուջեի հանրային քննարկման անցկացումը և մանրամասնորեն ներկայացրեց, թե ինչպես է բաշխվել համայնքի բյուջեն, ինչ գումարներով ինչպիսի աշխատանքներ է նախատեսվում իրականացնել գալիք տարում և որ ոլորտին որքան գումար է հատկացվել: Համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ Նվարդ Սահակյանը մանրա-

մասն անդրադարձավ բյուջեի եկամուտներին ու ծախսերին և նշեց, թե ինչպես են փոխվել բյուջետային ծախսերը վերջին 3 տարիների ընթացքում:

Քննարկման ընթացքում մասնակիցների կողմից հնչեցին մի շարք հարցեր ու առաջարկներ, որոնք վերաբերում էին համայնքի սոցիալապես անապահով ուսանողներին աջակցություն ցուցաբերելուն, քաղաքի երկրորդական փողոց-

ների բարեկարգմանն ու լուսավորության անցկացմանը, աղբահանության արդյունավետ իրականացմանը, համայնքում կոյուղագծերի կառուցմանը և այլն: Ի պատասխան նշվեց, որ հարցերն ու առաջարկները կքննարկվեն քաղաքապետ Դավիթ Համբարձումյանի հետ ու հնարավորության սահմաններում կներառվեն բյուջեում:

Հանդիպման ավարտին ՀՖՄ փորձագետ Վ. Սարգսյանը շեշտադրեց բնակչության ցուցաբերած ակտիվությունը, որը նպաստում է ՏԻ համակարգում հանրային մասնակցության բարձրացմանը:

Կարեւորելով այսօրինակ քննարկումների կազմակերպումը՝ բնակիչներն այն համոզմանն են, որ իրենք ոչ միայն կարողացան իրենց հետաքրքրող հարցերը հնչեցնել, այլ նաև՝ սա մի քայլ է, որն ապացուցում է, որ բնակիչն անտեսված չէ և կարող է մասնակցել համայնքի համար առաջնային հարցերի քննարկմանը, կարծիք հայտնել, այսինքն՝ մասնակցել տեղական ինքնակառավարմանը:

ՀԱՍՄԻԿ ԵՐՈՐԲԱՆ

ԾՐԱԳԻՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆԸ

«Համայնք-ՀամաՏեղի» գրուցակիցն է Գերմանիայի միջազգային զարգացման ընկերության (ԳՄՅԸ) «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի խորհրդատու Արմեն Բեշիշյանը:

Արոն Բեշիշյան, Դուք համակարգում եք հանրապետության 18 բազմաբնակավայր համայնքներում ԳՄՅԸ կողմից իրականացվող համայնքների տնտեսական զարգացմանն ուղղված ծրագիրը: Ի՞նչ կասեք այս մասին: Ի՞նչ ձեռքբերումներ կան արձանագրված:



Արմեն Բեշիշյանը, որ ԳՄՅԸ-ն, հայտարարված մրցույթում հաղթած «Ռեգիոնալ զարգացման հիմնադրամի» փորձագետների ուժերով, տեղական ինքնակառավարման համակարգում աջակցում է նախարարության՝ տնտեսական ակտիվացմանն ուղղված ծրագրային գերակա նախաձեռնությունների իրականացմանն այն հատվածում, որը որոշիչ է դրանք հաջողությամբ իրականացնելու համար: Խոսքս տեղերում համապատասխան գիտելիքի՝ տնտեսական վերլուծության, բիզնես ծրագրերի կառուցման, գնահատում կատարելու համար մեթոդներին, գործիքներին, մոտեցումներին, եղած տեղեկատվությունը կիրառելու եւ բացելու լրացնելու կարողություններին տիրապետելու մասին է:

Այսինքն երկրորդ տարին է, որ ԳՄՅԸ-ն, հայտարարված մրցույթում հաղթած «Ռեգիոնալ զարգացման հիմնադրամի» փորձագետների ուժերով, տեղական ինքնակառավարման համակարգում աջակցում է նախարարության՝ տնտեսական ակտիվացմանն ուղղված ծրագրային գերակա նախաձեռնությունների իրականացմանն այն հատվածում, որը որոշիչ է դրանք հաջողությամբ իրականացնելու համար: Խոսքս տեղերում համապատասխան գիտելիքի՝ տնտեսական վերլուծության, բիզնես ծրագրերի կառուցման, գնահատում կատարելու համար մեթոդներին, գործիքներին, մոտեցումներին, եղած տեղեկատվությունը կիրառելու եւ բացելու լրացնելու կարողություններին տիրապետելու մասին է:

Աշխատելով 18 խոշորացված համայնքներում՝ մեր ծրագիրը վերապատրաստման դասընթացներ է անցկացրել համայնքների ղեկավարների, տեղակալների, ֆինանսիստների, աշխատակազմերի ստորաբաժանումների ղեկավարների, քաղաքացիական հասարակության եւ մասնավոր հատվածների ներկայացուցիչների, ինչպես նաեւ մարզպետարաններում ծրագրերով զբաղվողների հետ:



Դասընթացների ժամանակ մասնակիցներին ներկայացվել են ծրագրային գաղափարները գույքագրելու եւ վերլուծելու, գաղափարները ծրագրային հայտեր եւ առաջարկներ դարձնելու, համայնքի մրցակցային առավելությունները բացահայտելու եւ գնահատելու, ֆինանսավորող կողմերի հետ բանակցելու եւ համայնքի տնտեսական զարգացման բնագավառում անհրաժեշտ այլ հմտություններ եւ գիտելիք:

Մասընթացների ժամանակ մասնակիցներին ներկայացվել են ծրագրային գաղափարները գույքագրելու եւ վերլուծելու, գաղափարները ծրագրային հայտեր եւ առաջարկներ դարձնելու, համայնքի մրցակցային առավելությունները բացահայտելու եւ գնահատելու, ֆինանսավորող կողմերի հետ բանակցելու եւ համայնքի տնտեսական զարգացման բնագավառում անհրաժեշտ այլ հմտություններ եւ գիտելիք:

Տվյալ համայնքի մրցակցային առավելությունները, առկա, բայց՝ դեռ չգնահատված ներուժը բացահայտելը, վերլուծելը եւ ի շահ համայնքի կայուն զարգացման գործադրելը չեն ակնկալվել ոչ վարչական կամ օրենսդրական կարգավորումներում, ոչ էլ՝ գործելաոճային իրողություններում:

Մի խոսքով, մինչեւ օրս այս բնագավառում ԳՄՅԸ կողմից իրականացված աշխատանքների եւ ծրագրերի շնորհիվ համայնքներին առաջարկվել են ինչպես գիտելիքային, այնպես էլ մեթոդաբանական հիմքեր, որոնց գործադրումը կաշակցի իրենց համայնքներում տնտեսական զարգացում ապահովելու ցանկացողներին: Որեւէ վարչարարական, վարչական եւ տնտեսական բարեփոխում չի

կարող ամբողջական ու գործուն լինել, եթե այն ուղղակիորեն չի առնչվում համայնքի բնակչի առօրյային եւ կենցաղին:

Վարչական, տարածքային, ինստիտուցիոնալ, պլանավորման, բյուջետավարման, սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերի արժեքը գնահատելու որոշիչ գործոնը դրանց կենսունակությունն է, այն է՝ մարդկանց համար հասկանալի, կիրառելի եւ շահավետ, ինչպես նաեւ կենսամակարդակը բարելավելու ուղղվածությամբ հավատարմ արժանի լինելը: Այլապես լավագույն իսկ մտահղացումը ինքնակառավարման է դառնում, խամրում եւ այլափոխվում, դառնում է եւս մի բեռ թե՛ տեղական, թե՛ պետական մակարդակներում:

Ինչ վերաբերում է ձեռքբերումներին, նշեմ, որ ԳՄՅԸ ներդրումները համայնքային ծառայության եւ տեղական ինքնակառավարման համակարգում գիտելիքի խորացման, վարչարարության, գործառնության, մասնագիտական հմտությունների եւ կարողությունների հզորացման բնագա-

տիտուցիոնալ եւ օրենսդրական կարգավորումներ, համայնքապետարանների կառուցվածքի ձեւավորում ըստ իրականում մատուցվող ծառայությունների, որոնք պահանջում են իրական գիտելիքներ եւ հմտություններ, ծրագրային ֆինանսական աղբյուրների հասանելիություն համայնքների համար եւ այլն:

Համայնքի տնտեսական զարգացումը սահմանված է ՀՀ կառավարության գերակայությունների շարքում: Որեւէ վարչական, կառավարչական բարեփոխում չի կարող արդյունավետ լինել, եթե համայնքում ապրող անհատը չտեսնի համայնքում ապրելը շարունակելու իմաստ՝ իր եւ իր ընտանիքի բարեկեցությունը բարելավելու տեսանկյունից: Հայրենիքի նկատմամբ անպատասխան սերը չի կարող կենսունակ կամ երկարակյաց լինել: Հայրենիքն էլ, որն առնում է իշխանության կերպարանը, պետք է ինչ-որ շոշափելի ձեւով փոխադարձի այդ սերը: Եթե ոչ, ապա որեւէ բարեփոխում անիմաստ է ու դատապարտված անհաջողության:

Փոխադարձելու եղանակը՝ մարդկանց գաղափարներին արձագանքելու եւ դրանցից որակյալներին աջակցելու իրական գործն է: Կարողությունների զարգացման միակ երաշխավորված նախադրյալը նրանց սատար կանգնելով կարող է դրսեւորվել: Ծրագրային առաջարկը կարող է թերի լինել իր մասնագիտական ձեւակերպումներում, բայց եթե այն ուղղված է համայնքում ապրելը շարունակելու եւ այնտեղ հաց վաստակելու ցանկության, գնահատված լինելու հետ, ապա դա միայն պետք է երախտագիտության եւ աջակցելու մղում առաջացնի որոշումներ ընդունողների մեջ:

Այսբանս ասելով՝ ցանկանում եմ նշել, որ եթե մեզ բոլորիս հաջողվի մեր նախաձեռնությունները կառուցել վերը համառոտագրված տրամաբանության եւ գաղափարի շուրջ, տեսանելի եւ արդյունավետ կդառնան ինչպես արդեն արված, այնպես էլ՝ պլանավորվող աշխատանքները:

Եթե անելիքներն ուրվագծելու լինեմ ըստ ուղղությունների, ապա համայնքային ծառայության, պլանավորման, ծառայությունների մատուցման, տնտեսական զարգացման, էլեկտրոնային, ֆինանսական կառավարման բնագավառներում շոշափելի արդյունքները հավասարապես կախված են առկա գիտելիքից, նվիրվածությունից եւ ռեսուրսային բազայից, առանց որոնց ՏԻ համակարգի թե՛ ինքնավարության, թե՛ ապակենտրոնացվածության աստիճանը, թե՛ ժողովրդավար եւ արդյունավետ կառավարումը հեռացող ապագայի տարրերից կմնան մեզանում:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

2017թ. դեկտեմբերի 12-ին ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզպետարանում քննարկվեցին համայնքների պաշտոնական համացանցային կայքերի միջոցով մասնակցային էլեկտրոնային գործիքների կիրառման առանձնահատկությունները:

Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոնի (ՏՀՉՎԿ) նախագահ Գ. Խաչատրյանն ըստ համայնքների ներկայացրեց «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի» (ՀԿՏՀ) շահագործման մշտադիտարկման արդյունքները: Մատնանշվեցին համակարգի շահագործման թերությունները: Մասնավորապես, որոշ համայնքներ դեռեւս չունեն դոմեյնային անուններ, համացանցում հասանելի չեն, չեն շահագործվում հիմնականում «Համայնքային գույքի կառավարում» եւ «Տեղական տուրքեր» բաղադրիչները: Մատնանշվեց «Գործադրություն» բաղադրիչում գործողությունների շղթան՝ հանձնարարականներ, զեկուցագրեր գրանցելու անհրաժեշտությունը: Գ. Խաչատրյանը ՏԻՄ աշխատակազմերին հորդորեց ավելի ակտիվորեն կիրառել ՀԿՏՀ-ն, բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը:

Մարզպետարանի ընդհանուր բաժնի պետ Սուսաննա Ցոգոլայանն առանձնացրեց համայնքների փաստաթղթաշրջանառության հետ կապված մի շարք խնդիրներ. մասնավորապես, էլեկտրոնային ստորագրությունների վավերականության, համայնքային կայքերի հասանելիության, համայնքների IP-ների փոփոխության եւ այլն:

Սեւանի համայնքապետարանի ներկայացուցիչ Հասմիկ Հովհաննիսյանը ներկայացրեց ՀԿՏՀ շահագործման իրենց փորձը, արձանագրված հաջողությունները: Սեւան համայնքի ղեկավարի կողմից ՏՀՉՎԿ-ին հանձնվեց շնորհակալագիր՝ ՀԿՏՀ ներդրման եւ զարգացման, նաեւ ցուցաբերած աջակցության համար:

Ներկայացվեցին նաեւ ՀամաՏեղ ծրագրի համացանցային պորտալը՝ www.celog.am, նրա դերն ու գործառնական հնարավորությունները, ինչպես նաեւ ֆեյսբուքյան էջը:

Հարգելի ընթերցող,
Ի՞նչ եք մտածում ամեն անգամ «Համայնք-ՀամաՏեղ» թերթը բացելիս, ի՞նչ ակնկալիքներ ու սպասումներ ունեք, ինչի՞ մասին եք ցանկանում կարդալ, բայց չեք գտնում այստեղ: Թերթի մասին ձեր կարծիքը շատ կարեւոր է մեզ համար:
Գրեք մեզ հետեւյալ հասցեով՝ Երեւան, Երվանդ Զոհրաբի 20, 4-րդ հարկ կամ madamyancfo@mail.am էլ. փոստին:

Սույն թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյան և Տավուշի մարզի Այրում բազմաբնակավայր համայնքներում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄԸՀ) ֆինանսավորմամբ Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) կողմից իրականացվող «Հարավային Կովկասում լավ տեղական ինքնակառավարման ծրագրի» շրջանակներում կազմակերպվեցին եւ անցկացվեցին հանրային քննարկումներ՝ այդ համայնքների 2018թ. տարեկան աշխատանքային պլանների (ՏԱՊ-երի) նախագծերի շուրջ:

Հանրային քննարկումներին մասնակցեցին վերոնշյալ համայնքների ղեկավարները, ավագանու անդամներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, աշխատակազմերի ներկայացուցիչներ, բնակիչներ, ինչպես նաև ՀՖՄ փորձագիտական թիմի համակարգող, ավագ փորձագետ Վահրամ Շահբազյանը եւ համայնքային փորձագետ Ժիրայր Ղազարյանը:

Համայնքի 2018թ. ՏԱՊ-ի մշակման հիմնական նպատակն է բարելավել համայնքի պլանավորման գործընթացները եւ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատ-

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱԿԱՅՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԱՊ-ԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՎՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ



ված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԾ) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների եւ ծրագրերի իրականացումը:

Հանրային քննարկումների սկզբում Վահրամ Շահբազյանը մանրամասն ներկայացրեց ՏԱՊ-ի մշակման անհրաժեշտությունը՝ դիտարկելով այն որպես տեղական ժողովրդավա-

րության զարգացման, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ծրագրային եւ ֆինանսական կառավարման, ինչպես նաև համայնքն արտաքին աշխարհին ներկայացնելու հանրային կառավարման ստորին՝ համայնքային մակարդակում գործող, համայնքի օրենքով սահմանված պարտադիր խնդիրների, ՏԻՄ-երի կանոնադրական նպատակների ու խնդիրների լուծման համար տվյալ տարվա կարելիք ունեցող ծրագրային փաստաթուղթ: Նա անդրադարձավ նաև ՏԱՊ-ի, ՀՀԾ-ի, տարեկան բյուջեի եւ համայնքապետարանի կապերին առնչվող հարցերին:

Հանրային քննարկման դրված հարցի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից նշանակված աշխատա-

կազմերի ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց համայնքի տեսլականը եւ ոլորտային նպատակները, 2018թ. ծրագրերի ցանկը եւ նրանց տրամաբանական հենքերը, համայնքի գույքի կառավարման 2018թ. ծրագիրը, ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը եւ մոնիտորինգի ու գնահատման պլանը, այնուհետև պատասխանեցին նաև քննարկումների մասնակիցների կողմից բարձրացված հարցերին: Հաշվի առնելով քննարկումների ժամանակ արված առաջարկությունները՝ ներկայացված ՏԱՊ-երը կլրամշակվեն եւ տարեկան բյուջեների հետ միասին կներկայացվեն համայնքների ավագանիների քննարկմանը եւ հաստատմանը:

ԺԻՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ,
ՀՖՄ փորձագետ

Գյուղամեջում «Դինամիկայի» երիտասարդներն են

Մեկնարկել է «Դինամիկա» քաղաքացիական նախաձեռնության կողմից իրականացվող «Գյուղամեջ» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Տեղ, Տաթև, համայնքների ակտիվ երիտասարդական խմբերի համար կազմակերպվել են դասընթացներ՝ «Ինչպես բացահայտել համայնքային խնդիրները» եւ «Քաղաքացիական լրագրությունը համայնքային խնդիրների հանրայնացման գործիք» թեմաներով:

Առաջին դասընթացի ընթացքում ներկայացվեց համայնքի մոդելը, բնակիչների պարտականությունները եւ իրավունքները: «Իմ երազած համայնքը» խորագրի միջոցով մասնակիցները ներկայացրեցին իրենց բնակավայրերն այնպես, ինչպես իրենք են պատկերացում: Այնուհետև առանձնացրեցին համայնքում առկա այն խնդիրները, որոնք իրենց երազած համայնքներում արդեն լուծված էին: Խմբային աշխատանքի միջոցով մասնակիցները ծանոթացան ու տարբերակեցին համայնքային իշխանության տակ գտնվող կառույցներն ու օբյեկտները:

Երկրորդ դասընթացի ժամանակ մասնակիցներին ներկայացվեցին քաղաքագրողների դերը, նրանց միջոցով համայնքային խնդիրների բացահայտման ու լուծումներ մշակելու կարելիությունը, մեդիայի, համացանցից ճիշտ օգտվելու, նյութեր, կարծիքներ հրապարակելու, սոցցանցերի, կայքերի, էլեկտրոնային հասցեների կառավարման ու ճիշտ օգտագործման հմտությունները: Հանդիպման վերջում առանձնացվեցին համայնքային նշանակության այն խնդիրները, որոնք մասնակիցների կարծիքով առաջնային լուծում են պահանջում, եւ որոնց հանրայնացմամբ կբարձրվեն թիմի անդամները:

Նախագծի շրջանակներում երիտասարդները մեդիա նյութերի, հոդվածների, լուսանկարների միջոցով հանրայնացնում են նաև թիրախ համայնքների կազմի մեջ ընդգրկված բնակավայրերի խնդիրները: Այդ նպատակով երկու համայնքների երիտասարդական խմբերից ընտրված երիտասարդների համար կազմակերպվեց նաև գործնական աշխատանք, որի ընթացքում քննարկվե-

ՀՖՄ ՓՈՔԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ

Ներկայացնում ենք Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) կողմից՝ Համատեղ ծրագրի շրջանակներում տրամադրված փոքր դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերը:



ցին երիտասարդների կողմից մինչև այժմ պատրաստված մեդիա նյութերը: Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել հանդիպումներ համայնքի բնակիչների հետ, որոնք նույնպես իրենց կարծիքը կհայտնեն առաջնահերթ լուծումներ պահանջող խնդիրների մասին: Այնուհետև՝ ընդհանրացնելով խնդիրները, դրանք կքարտեզագրվեն «ուշահիդի» առցանց գործիքի օգնությամբ:

Պլանավորվում է ծրագրի եզրափակիչ փուլում յուրաքանչյուր համայնքում կազմակերպել «ՄեդիաԴատ» խաղը, որի ընթացքում համայնքային իշխանություններին կներկայացվի «հայցադիմում»՝ ըստ համայնքի ակտիվ խմբի անդամների կողմից բացահայտված խնդիրների ու քաղաքագրողների կողմից պատրաստած նյութերի:

ԲԵԼԼԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Համատեղ եւ համաչափ» ծրագրի ընթացքը

2017թ. հոկտեմբերին Թումանյան բազմաբնակավայր համայնքում մեկնարկեց «Համայնքային համախմբման եւ աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Համատեղ եւ Համաչափ» ծրագիրը, որի նպատակն է աջակցել համայնքի բոլոր բնակավայրերի բնակիչներին՝ ներգրավել հնգամյա զարգացման ծրագրի իրականացման մասնակցային մոնիտորինգին, ծրագրերի իրականացման եւ համաչափ բյուջետավորման գործընթացներին:

2017թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Թումանյան համայնքի ՏԻՄ-ի հետ համայնքի բոլոր բնակավայրերում հանդիպումներ կազմակերպվեցին, որոնց արդյունքում բնակավայրերում ձեւավորվեցին 5-10 հոգանոց ակտիվ խմբեր, որոնք հետագայում պետք է ներգրավվեն համայն-

քում իրականացվող ծրագրերի մոնիտորինգի, ֆոնդահայթայթման, մասնակցային պլանավորման եւ բյուջետավորման գործընթացներին: Խմբերի կազմում ներգրավվեցին հիմնականում խոստումնալից երիտասարդներ:

Սույն ժամանակահատվածում ՏԻՄ-ի հետ ձեռքբերվեց համաձայնություն համայնքի բոլոր 7 բնակավայրերում Թումանյան, Զարինջ, Աթան, Շամուտ, Անի-ձոր, Մարց, Լորուտ, կազմակերպել տարեկան գործողությունների ծրագրերի մշակման ուղղված քննարկումներ, որոնց արդյունքներով նաև պետք է ընթացքում կազմվի համայնքի 2018թ. բյուջեի նախագիծը: Ծրագրային թիմի, ակտիվ խմբերի անդամների եւ բնակավայրերի վարչական պատասխանատուների միջև համագործակցության արդյունքում բոլոր բնակավայրերում իրականացվեցին քննարկումներ: Բնակիչները կատարեցին բազմաթիվ առաջարկություններ, որոնք արձանագրվել են, կնքվել են բնակավայրերի վարչական պատասխանատուների կողմից եւ էլեկտրոնային ու տպագիր ձևաչափերով ուղարկվել ՏԻՄ-ին:

Ընթացիկ տարվա դեկտեմբերի 22-ին «Համայնքային համախմբման եւ աջակցության կենտրոն» ՀԿ-ի գրասենյակում ակտիվ խմբերի 28 անդամների համար կազմակերպվեց «Առաջնորդություն» թեմայով վերապատրաստման դասընթացը: Այն անցավ ակտիվ մթնոլորտում, գյուղական հեռավոր բնակավայրերի երիտասարդները լիովին ինտեգրվեցին պրոցեսներին:

Առաջիկայում ծրագրով նախատեսված է երիտասարդների համար կազմակերպել մոնիտորինգի, ֆոնդահայթայթման, ՏԻՄ ոլորտի օրենսդրության եւ այլ թեմաներով դասընթացներ:

Դեկտեմբերի 26-ին ակտիվ խմբերի ներկայացուցիչները մասնակցեցին Թումանյան համայնքի 2018թ. բյուջեի նախագծի հաստատման նիստին:

ՍԵՒ. ՍԻ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

2016թ. կայացած ՏԻՄ-երի ընտրությունները շրջադարձային եղան մի շարք մեծ ու փոքր համայնքների համար, քանզի ղեկավարման երկարամյա փորձ ունեցող բազմաթիվ համայնքապետներ հրաժեշտ տվեցին իրենց պաշտոններին: Մասին քաղաքում եւս փոփոխություններ եղան, եւ բնակչության վստահությանն արժանացավ երիտասարդ թեկնածու՝ Դավիթ Համբարձումյանը: Պաշտոնավարման մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների, համայնքում առկա խնդիրների եւ մի քանի այլ հարցերի շուրջ «Համայնք-ՀամաՏեղը» զրուցեց Մասիս համայնքի ղեկավարի հետ:

- Պարոն Համբարձումյան, Ձեր կարգախոսն էր «Նոր շունչ՝ Մասիս քաղաքին»: Հաջողվե՞լ է ձեզ նոր շունչ հաղորդել համայնքին, եւ որպես համայնքի ղեկավար ի՞նչ եք հասցրել անել մեկ տարվա ընթացքում:

-Մեկ տարվա գործունեությամբ փորձել եմ անել հնարավոր ամեն ինչ ու նոր շունչ տալ իմ հարազատ քաղաքին, քանզի դա ինձ համար ոչ միայն նախընտրական կարգախոս է, այլեւ՝ նպատակ: Թե որքանով է դա ինձ հաջողվել, կարող է ասել ու գնահատել մասիսցին, քանզի ժողովուրդն ամենաարդար դատավորն է:

Պաշտոնավարման մեկ տարվա ընթացքում իմ ուշադրության կենտրոնում մշտապես եղել է յուրաքանչյուր մասիսցի՝ իր հոգսերով ու խնդիրներով, որոնք նաեւ իմն են:

Պետք է ուրախությամբ նշեմ, որ այս կարճ ժամանակահատվածում, ինչպես համայնքային միջոցներով, այնպես էլ պետական եւ բարերարների աջակցությամբ հասցրել ենք իրականացնել բազմաթիվ աշխատանքներ՝ փողոցների եւ մայրաքաղաքի բարեկարգում, կանաչապատում, գծանշումներ եւ փոսայցման աշխատանքներ, գիշերային լուսավորության անցկացում, մանկապարտեզների սանիտարահիգիենիկ պայմանների եւ սննդի որակի բարելավում, խաղահրապարակների եւ տարեցների համար գրուցարան-տաղավարների կառուցում՝ աշխատանքներ, որոնք շարունակական բնույթ են կրելու:

Կարելի էր նաեւ բազմաբնակարան շենքերի մուտքերի, տանիքների ու նկուղների վերանորոգումը, ջրագծերի ու կոյուղագծերի անցկացումը:

Քաղաքային իշխանության մշտական ուշադրության կենտրոնում են նաեւ երիտասարդներին, ուսանողներին հուզող հարցերը: Փորձում ենք նպաստել համայնքում մշակութային, սպորտային կյանքի աշխուժացմանը:

Արդեն պատրաստ է համայնքի 2018թ. բյուջեի նախագիծը, որը քննարկվեց նաեւ հանրային լսումների ժամանակ, եւ այդ փաստաթղթում հստակ ուրվագծվում են գալիք տարվա մեր անելիքները:

- Ինչպես յուրաքանչյուր համայնքում, Մասիսում եւս կան մի շարք հիմնախնդիրներ:

- Անշուշտ: Կան խնդիրներ, որոնք կուտակվել են տարիների ընթացքում, եւ դրանց լուծման համար ժամանակ է պահանջվում, եւ այնպիսի խնդիրներ, որոնք միայն համայնքի ուժերով հաղթահարել չենք կարող, եւ անհրաժեշտ է ավելի գլոբալ մոտեցում:

Տարիներ շարունակ Մասիս քաղաքում եւ հարեւան համայնքներում գերխնդիր է եղել խմելու ջրի հարցը. արտեզյան հորերից մատակարարվող ջուրը կարելի էր օգտագործել միայն կենցաղային նպատակով, իսկ խմելու ջուրը մարդիկ ստիպված էին գնել: Այսօր արդեն որոշակիորեն փոխվել է խմելու ջրի որակը:

Համայնքը դեռեւս ունի ոռոգման ջրի, կոյուղագծերի խնդիր, հրատապ է նաեւ վթարային շենքերի ամրացման հարցը: Մասիս քաղաքի հարեւանությամբ գտնվում է բավական մեծ աղբավայր, որտեղից տարածվող հոտերը, ծովից բնակչության արդարացի դժգոհության



պատճառ են դառնում: Էկոլոգիական այս խնդրի վերաբերյալ տեղյակ են համապատասխան գերատեսչությունները, եւ հույս ունենք՝ որ որոշ ժամանակ անց այն կլուծվի:



ման համար բանակցում ենք պատկան կառույցների հետ, եւ 2018 թվականի ընթացքում կվերանորոգվի 2-2,5 կմ երկարությամբ ճանապարհահատված:

Խնդիրների թվարկումը կարելի է շարունակել, բայց մենք համագործակցում ենք մարզային իշխանության եւ հանրապետական գործադիր մարմինների հետ ու համատեղ ուժերով փորձում ենք գտնել դրանց լուծման ուղիներ:

- Պարոն Համբարձումյան, Ձեր նախընտրական ծրագրի դրույթներից մեկը վերաբերում է տեղական ինքնակառավարման համակարգում հանրային մասնակցության դերի բարձրացմանը:

- Այո, յուրաքանչյուր համայնքի տեղական ինքնակառավարումն ավելի արդյունավետ ու նպատակային կիրականացվի, եթե այդ գործընթացին մասնակցեն բնակիչները՝ իրենց խորհուրդներով, առաջարկներով, քննադատություններով:

Ես այն համոզմանն եմ, որ քաղաքապետարանի կատարած աշխատանքները պետք է լինեն բաց եւ թափանցիկ՝ ավելի հասու յուրաքանչյուր բնակչի, քանի որ քաղաքապետի եւ համայնքի ամբողջ աշխատակազմի պարտականությունն է մոտ լինել բնակչին, տեսնել քաղաքի խնդիրները եւ հետեւողականությամբ ցուցաբերել դրանց լուծման ուղղությամբ:

Մեր համայնքապետարանի դռները միշտ բաց են բնակիչների առջեւ: Չնայած կա քաղաքացիների ընդունելության օր, բայց յուրաքանչյուր աշխատանքային օր մարդիկ կարող են դիմել իրենց հուզող հարցերով:

Իսկ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության դերի բարձրացման համար դեռ որոշակի ժամանակ է պետք, որովհետեւ մարդկանց մեջ կան տարիներով արմատացած կարծրատիպեր, որոնք պետք է փոխել: Այսօր փոքր-ինչ դժվար է բնակիչներին ներգրավել, բայց աշխատանքներ տանում ենք այս ուղղությամբ. կազմակերպում ենք բակային շրջայցեր, որոնք ընթացքում եւս քննարկում ենք մի շարք հարցեր, մարդիկ սկսել են գալ ու մասնակցել համայնքի ավագանու նիստերին: Վերջերս անցկացվեց նաեւ համայնքի 2018թ. բյուջեի նախագծի հանրային քննարկում, որին նկատվեց բնակիչների ակտիվ մասնակցություն:

Կարծում եմ եւ լիահույս եմ, որ կգա մի ժամանակ, երբ համայնքի ղեկավարումը կհենվի համայնքի ղեկավար-համայնքապետարան-բնակիչ սերտ համագործակցության վրա:

- Ավարտվեց 2017 թվականը...

- Ընդամենը մի քանի օրից հրաժեշտ կտանք 2017 թվականին, որն արդյունավետ ու ձեռքբերումների տարի էր ոչ միայն Մասիս քաղաքի, այլ նաեւ մեր երկրի համար: Լինելով ՏԻ համակարգի ներկայացուցիչ, կարելի էր այս ոլորտում կատարված փոփոխությունները՝ մայր օրենքի նոր խմբագրված տարբերակով գործադրումը, իրականացվող վարչատարածքային բարեփոխումների գործընթացը, որոնք, անշուշտ, կնպաստեն ՀՀ տեղական ինքնակառավարման կայացմանն ու զարգացմանը:

Մաղթում եմ, որ 2018 թվականը լինի նոր ձեռքբերումների, առաջընթացի տարի, եւ խաղաղությունն ու բարօրությունն իշխի մեր երկրում, յուրաքանչյուր հայ ընտանիքում:

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ Ե ՄՏՆՈՒՄ

Կերչերս Արմավիրի դրամատիկական թատրոնը հանդիսատեսի դատին հանձնեց Ազատ Շահինյանի «Բանտարկյալը» պիեսը: Շուրջ հինգ ամիս տեւած փորձերից հետո ներկայացումն իրականացավ ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ: Առաջնախաղին ներկա էին նաեւ Արմավիրի մարզպետարանի աշխատակիցներ, ուսուցիչներ եւ մշակույթի գործիչներ, ինչպես նաեւ ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչը: Այս պիեսի բեմադրությունը ռեժիսոր

Գրիգոր Հովհաննիսյանը ներկայացրել էր նաեւ տարիներ առաջ. սա Նյույթի Նոր մեկնաբանություն էր՝ տարիներ անց, Նոր մտեցմամբ: Հանդիսատեսի գնահատականը բարձր էր, ոգեւորող: «Բավականին լուրջ եւ պատրաստված հանդիսատես ունեցանք առաջնախաղին, հաճելի է խաղալ նման գրագետ հանդիսատեսի առջեւ՝ գիտակցելով, որ աշխատանքը գնահատվում է», - նկատում է դերասան Վլադիմիր Սաղոյանը: Ներկայացումը երկրորդ անգամ էս

ներկայացվեց հանդիսատեսին, ըստ նախնական ծրագրի, մինչեւ մարտ ամիսը նախատեսվում է եւս ութ բեմադրություն: Այժմ թատերախումբը աշխատում է Ամանորի բեմադրությունների վրա: Թատերախմբին իր աջակցությունը ցուցաբերեց նաեւ «Արմավիրի զարգացման կենտրոնը»՝ ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում: Արմավիրի ԻնֆոՏան 2-րդ տարվա գործողությունները պլանավորելիս՝ երիտասարդները համայնքային խնդիրները քննարկելու ընթաց

քում եկան այն եզրակացությանը, որ մշակութային կյանքի ակտիվացման համար անհրաժեշտ է աջակցել համայնքային թատրոնին: Այս աջակցության շնորհիվ թատերախմբի գործունեության լուսաբանումը դարձավ ԻնֆոՏան 2-րդ տարվա գործողություններից մեկը: Երիտասարդները հանդիպումներ ունեցան թատերախմբի ղեկավարի հետ եւ քննարկեցին համագործակցության հնարավորությունները: Արդյունքում՝ սրանք օգնեցին թատրոնին հաղորդակցության եւ տեղեկատվության տարածման գործում, աջակցեցին թատերախմբին՝ ակտիվացնելով վերջինիս ֆեյսբուքյան էջը, ապահովելով կապը ՉԼՄՆ-ների հետ, պատրաստելով տպագրական Նյութեր, տեղադրելով Նյութեր Վիքիպեդիայում եւ այլն:

ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) ծրագրային բաղադրիչներից մեկը ՏԻՄ-քաղաքացիական հասարակություն համագործակցության արդյունավետ մեխանիզմների միջազգային փորձի հետազոտումն էր, որի ավարտից հետո ԵՀՀ-ն նախաձեռնեց հանդիպում-քննարկումների շարք՝ օգտագործելով ԻնֆոՏան ցանցի հնարավորությունները: Առաջին քննարկումը տեղի ունեցավ 2017թ. դեկտեմբերի 20-ին Մարտունու ԻնֆոՏանը, որին մասնակցում էին Մարտունու, Գավառի, Վարդենիսի, Մաղինայի, Ծակքարի, Գեղիկոմիտի, Վաղաշենի, Արծվանիստի ՏԻՄ-երի եւ ՀՀ-ների ներկայացուցիչներ: ԵՀՀ-ից Ջուլյա Սահակյանը նախ ներկայացրեց «Տեղական ինքնակառավարման մարմինների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության հեռանկարները. միջազգային փորձը եւ դրա տեղայնացման հնարավորությունները Հայաստանում» որակական հետազոտության հիմնական արդյունքները՝ կանգ առնելով հետազոտության ընթացքում բացահայտված առավել հետաքրքիր համագործակցության մեխանիզմների եւ օրինակների վրա: ՏԻՄ-ԵՀՀ համագործակցության խթանումը կարելու է Հայաստանի հա-

ՏԻՄ- ԵՀՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ. ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԻՆՖՈՏԱՆԸ

մար նախ եւ առաջ այն պատճառով, որ այդպիսով հնարավոր է դառնում առավել արդյունավետ մոբիլիզացնել եւ օգտագործել ներհամայնքային ռեսուրսը, ինչը համայնքների ֆինանսական բարդ վիճակի պայմաններում Նոր հնարավորություններ կստեղծի: Համագործակցության մեխանիզմների արդյունավետ կիրառման արդյունքում հնարավորություն կստեղծվի բարձրացնել ՏԻՄ-երի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ներգրավել բնակիչներին համայնքային զարգացման գործընթացի մեջ եւ բարձրացնել ՏԻՄ-բնակիչ հաղորդակցության որակը: ԵՀՀ-ները կարող են կարելու դեր խաղալ նաեւ համայնքի եւ ՏԻՄ-երի՝ աշխարհի հետ կապի ամրապնդման տեսանկյունից՝ մի կողմից ներկայացնելով համայնքը աշխարհին, մյուս կողմից՝ հավելյալ ռեսուրս ներգրավելով միջազգային համագործակցության շնորհիվ: Քննարկման ժամանակ ներկայացվեցին եւ քննարկվեցին այնպիսի գործիք-

ներ, ինչպիսիք են հոգաբարձությունը, պատվիրակումը, ՏԻՄ-երի կողմից ՀՀ-ներին տրվող դրամաշնորհների պրակտիկայի կիրառումը, ինչպես նաեւ ՀՀ-ների մոտ առկա մասնագիտական եւ մեթոդաբանական գիտելիքի օգտագործումը մասնավորապես համայնքային բյուջեների եւ զարգացման ծրագրերի պլանավորման ընթացքում: Քննարկվեց արդեն իսկ առկա մեխանիզմների օգտագործումը, մասնավորապես՝ համայնքի ղեկավարին կից խորհրդատվական մարմինների ակտիվացումը համայնքների խոշորացման համատեքստում: Մասնակիցները միակարծիք էին, որ դեռեւս ձեւական բնույթ կրող խորհրդատվական մարմինները կարող են լրացուցիչ հաղորդակցական խողովակ դառնալ խոշորացված համայնքներում մասնավորապես բնակավայրերի համար, որոնք ներկայացված չեն ավագանու կազմում: Արդյունքների ներկայացումը եւ քննարկումը հնարավորություն տվեց ՏԻՄ

եւ ԵՀՀ ներկայացուցիչներին՝ գնահատելու առաջարկվող մեխանիզմների կիրառումն իրենց համայնքներում, եւ միջոցառման վերջին հատվածում արդեն առարկայական քննարկում ծավալվեց այն մասին, թե որ համայնքի համար ինչ է կարելի անել: ԵՀՀ ներկայացուցիչները հավաստիացրեցին մասնակիցներին, որ անհրաժեշտության դեպքում պատրաստ են կազմակերպական, խորհրդատվական եւ մեթոդաբանական աջակցություն ցուցաբերել բոլոր այն գործընկերներին, որոնք կցանկանան կիրառել այս գործիքները: Մոտ ապագայում ԵՀՀ-ն կշարունակի միջոցառումների շարքը նաեւ այլ ԻնֆոՏաներում, իսկ վերջում ամփոփիչ հանդիպում կկազմակերպվի Երեւանում՝ հնարավոր օրենսդրական եւ ինստիտուցիոնալ փոփոխությունները քննարկելու համար:

ՄԻՔԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀամաՏեղ ծրագրի համակարգող

ԻՆՖՈՏՆԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀամաՏեղ ծրագրի չորրորդ տարում պլանավորվեցին ԻնֆոՏաների գործողությունները: Ներկայացնում ենք Արարատի եւ Վայքի ԻնֆոՏաների՝ առաջիկա ամիսներին իրականացվելիք գործողությունների ցանկը:

Արարատի ԻնֆոՏան

1.Հանդիպումներ նվիրված վարչատարածքային բարեփոխումներին
ԻնֆոՏան հիմնական գործողություններից կլինի իրազեկել բնակիչներին ՀՀ-ում տեղի ունեցող վարչատարածքային բարեփոխումների, դրանց հետեւանքների եւ էության մասին, ինչպես նաեւ՝ բարձրաձայնել բնակիչներին հուզող խնդիրները, կարծիքները կամ առաջարկները սոցիալական տարբեր հարթակների միջոցով եւ կազմակերպել հանդիպում-քննարկումներ ավագանու անդամների հետ:

2.Փոփոխություններ գրադարանային գործունեության ոլորտում
Վերանորոգումից եւ մասնագիտական գրքերի հավաքագրումից հետո ԻնֆոՏանը նախատեսում է իր աջակցությունը ցուցաբերել Արարատ քաղաքի համայնքային գրադարանի ինստիտուցիոնալ զարգացմանը, վերափոխել գրադարանի ավանդական գիրք վեբը-նել-հանձնելու մշակույթը եւ դարձնել այն գիտելիքի ու գաղափարների փոխանակման վայր: Նախատեսվում է իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրություն եւ դուրս բերել լավագույն մոդելները, որոնք հնարավոր կլինի կիրառել այս համայնքային գրադա-

րանում, ձեռք բերել պայմանավորվածություն Հայաստանում արդեն նման փորձ ունեցող գրադարանների աշխատակիցների հետ եւ իրականացնել գործող մեթոդաբանական Նյութերի փոխանակում:

3.Հայտարարությունների վահանակների տեղադրում
ԻնֆոՏան ջանքերով Արարատ համայնքի 3 տարբեր հատվածներում տեղադրվել են կանգառներ, իսկ այժմ նախատեսվում է կազմակերպել տեղեկատվական վահանակների տեղադրում կանգառների հարակից վայրերում, որոնց վրա կփակվեն հայտարարություններ, ավագանու նիստերի իրականացման ժամանակացույցը, քննարկվող հարցերի ցանկն ու որոշումները՝ այսպիսով լուծելով քաղաքի պատերի ադտոսման խնդիրը:

4.Քաղաքագրողների պատրաստում
ԻնֆոՏանը նախատեսում է շահառուների ցանկում ավելացնել նաեւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, բարձրացնել սրանց հուզող հարցերը եւ խնդիրները: ԻնֆոՏանը այս տարի եւս շարունակելու է համայնքային խնդիրների լուսաբանումը քաղաքացիական լրագրողների Նյութերի միջոցով՝ ընդլայնելով ԻնֆոՏան

քաղաքագրողների կազմը, տրամադրելով նրանց Նոր գործիքներ եւ հարթակներ այդ Նյութերը հրապարակելու համար:

Վայքի ԻնֆոՏան

1.Դասընթացներ մեղիագրագիտության, քաղաքագրության, քննադատական մտածողության վերաբերյալ
Վայքի ԻնֆոՏան առաջիկա գլխավոր գործողություններից կլինի մեղիագրագիտության, քաղաքագրության, քննադատական մտածողության վերաբերյալ դասընթացների կազմակերպումը: Ակնկալվում է ամսական անցկացնել 1-2 դասընթաց, որոնց արդյունքում վերապատրաստված քաղաքագրողների Նյութերը կտեղադրվեն տեղական լրատվամիջոցներում եւ սոցիալական ցանցերում:

2.Մեղիատուրեր
ԻնֆոՏան մեղիաթիվը կշարունակի իր ճամփորդությունը Վայքի Ձորի համայնքներով՝ նպատակ ունենալով պարզել վարչատարածքային բարեփոխումների ազդեցությունը, բնակիչների սպասելիքները եւ արդեն արձանագրված փոփոխությունները: Նախատեսվում է անցկացնել պաշտոնական տվյալների հավաքագրում,

անցկացնել հարցումներ Վայք համայնքի կազմի մեջ մտնող եւ հարեւան խոշորացված համայնքների բնակիչների շրջանում: ԻնֆոՏանի կամ մեղիաճամբարի ընթացքում կներկայացվեն մեղիատուրերի ժամանակ արված ֆոտո, աուդիո եւ վիդեո ռեպորտաժները:

3. Համայնքի զարգացման հնգամյա պլանի եւ բյուջեի այլընտրանքային հանրային քննարկումներ
Վայքի ԻնֆոՏան առաջիկա միջոցառումների ցանկում տեղ է գտել նաեւ այլընտրանքային հանրային քննարկումների կազմակերպումը: Միջոցառման հիմնական նպատակն է ներկայացնել այլընտրանքային հնգամյա պլանն ու բյուջեն, որոնք կկազմվեն ԻնֆոՏան կողմից բնակիչների հետ քննարկումների արդյունքում:


4.Հանդիպում-ասուլիս ավագանու անդամների հետ
ԻնֆոՏանը պարբերաբար կազմակերպում է հանդիպում Վայք համայնքի ավագանու անդամների հետ: Հանդիպման ժամանակ համայնքի բնակիչների եւ ավագանու անդամի միջեւ ծավալվում է հետաքրքիր գրույց՝ ավագանու դերի, պատասխանատվության, մարդկային ու մասնագիտական որակների, ավագանու անդամ դառնալու նպատակի ու շարժառիթների վերաբերյալ:

5. Վայքի Նոր լույս
Այս տարի որոշվեց Նոր նախաձեռնությամբ հանդես գալ՝ Վայք համայնքը կունենա Նոր լույս: Կազմակերպական բոլոր հարցերը իր վրա է վերցրել ԻնֆոՏանը:

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒՆԵՑԵԼ Ե ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՈՒՄՏ, ՈՒՍԱՆԵԼԻ ՓՈՐՁ»

«Համայնք-ՀամաՏեղ» թերթում Արեւիկա Հարությունյանի «Պանկուից մեր օրերը» գրքից հատվածների տպագրումը մեր ընթերցողները ոգեւորությամբ եւ հետաքրքրությամբ ընդունեցին: Ինչի մասին վկայում են ընթերցողների ամենատարբեր շրջանակների՝ տեղական ինքնակառավարման համակարգի պատասխանատուներ, համայնքների ղեկավարներ եւ ավագանիների անդամներ, տեղական եւ միջազգային փորձագետներ, լրագրողներ եւ այլն, դրական արձագանքների չդադարող շարքը: Այդ պատճառով այս համարում ներկայացնում ենք գրքի հեղինակին՝ վաստակաշատ լրագրող Արեւիկա Հարությունյանին:

Ինչ-որ բան պատահեց, որ որեւէ կերպ առնչություն ունենար մեր թեմային: Եվ Մատենադարանի մատյաններում, եւ արխիվային գրքերում ավելի շատ հանդիպում էր գյուղի-քաղաքի սոցիալական իրավիճակը ներկայացնող տեղեկատվություն, բայց չկային բուն կառավարման հետ կապված, տեղական ինքնակառավարման մոդելի մասին (ինչով մենք շատ հարուստ ենք եղել) ուղղակի տեղեկություններ պարունակող գրքեր: Ավելի շատ եղել են անուղղակի տեղեկությունները: Օրինակ, Անիի մասին կյուրերը ավելի շատ քաղաքաշինական, ճարտարապետական գրքերում են: Քաղաքաշինական նման լուծումներով քաղաքի կառավարման մոդելն ինչպիսի՞ն է եղել՝ հարկերից ենք ենթադրում: Կամ այն, որ Կիլիկիայի քաղաքային դատարանները՝ բուրջեսները, ընտրովի մարմիններ են եղել, գրա շատ անսպասելի մի աղբյուրում:



Տիկին Հարությունյան, ինչպե՞ս ծնվեց «Պանկուից մեր օրերը» գիրքը գրելու գաղափարը:

- Հայաստանում կառավարման հարցը ինձ վաղուց է հետաքրքրել, որովհետեւ մեր երկիրն ունի հազարամյա պատմություն: Այդ ընթացքում, ճիշտ է, ժամանակ առ ժամանակ օտար տիրապետողների կառավարման մոդելը աշխատել է, բայց բնականաբար մեր երկիրը պետք է որ կառավարման ինչ-որ սեփական մոդել ունեցած լիներ: Եվ ինձ հետաքրքրել է՝ արդյո՞ք այդ մոդելը կարող էր ապահովել քաղաքների, գյուղերի պահպանությունն այնպես, որ դրանք մեր օրերը հասնեն: Ունենք քաղաքներ, որոնք 2 հազար տարվա պատմություն ունեն, գյուղեր, որոնք նույնիսկ 2200 տարվա պատմություն ունեն: Լրագրողական գործունեությանս ընթացքում հնարավորություն ունեցա զբաղվելու այդ հարցով, ուսումնասիրելու եւ 2007-ին ամփոփելու մեկուկես տասնամյակի ընթացքում հավաքված այդ տեղեկատվությունը:

- Հսկայական աշխատանք է՝ եւ՛ կյուրի ծավալի, եւ՛ ժամանակագրության առումով: Ի՞նչ դժվարություններ եք ունեցել՝ տեսնելու կյուրի, բովանդակային, քաղաքական կամ այլ կարգի:

- Դժվարությունն այն էր, որ պետական կառավարման, մասնավորապես տեղական ինքնավարության մասին որեւէ առանձին գիրք, աշխատություն չկար: Ես այդ պատճառով նշեցի մեկ եւ կես տասնամյակ, որովհետեւ ցարդերի, կցկտուր տեղեկություններ առկա են Քերթոզահոր՝ Մովսես Խորենացու, միջնադարի մյուս պատմիչների, նաեւ հետագա ուսումնասիրողների կամ 20-րդ դարի խորհրդային պատմաբանների մոտ, որոնք որոշ չափով անդրադարձել էին այս թեմային: Բայց դրանք շատ կցկտուր եւ շատ քիչ տեղեկություններ էին: Սա մեծ խնդիրներ էր առաջացնում: Մատենադարանում իմ ուսումնասիրությունների ընթացքում ես ստիպված էի ահռելի քանակությամբ ուսումնասիրել, համապատասխան տեղեկատվությունը գտնելու ճանապարհին հատկապես դժվարություններ էր հարուցում լեզվի՝ գրաբարի հարցը: Դժվար էր նաեւ արխիվում: Ինչպես պարզեցի, խորհրդային տարիներին, ստալինյան ռեպրեսիաների ընթացքում աղբյուրները պարզապես անկասկած հավաքվել են, չեն համակարգվել: Օրինակ, ծխական համայնքի վերաբերյալ տեղեկությունները, կարծում էի, գտնեմ ամփոփ կգտնեմ արխիվում: Բայց դա էլ էր բացակայում: Կարելի էր ասել՝ հավաքչարարությամբ եմ մեծ ծավալի կյուրեր նայել, նաեւ պատահական, թեմային անմիջականորեն չառնչվող կյուրեր, որտեղ հնարավոր է որ հանկարծ

Մենք ունեցել ենք ինքնակառավարման հարուստ փորձ, որն այսօր կարող է ներկայիս մոդելը բարելավելու համար դաս լինել: Օրինակ, մենք գյուղական համայնքներում ունեցել ենք համապարտ երաշխավորության սկզբունք, երբ ամբողջ գյուղի բնակիչները հավաքվել են

եւ պայմանագիր են կնքել՝ երբ մեկի վիճակը վատացել է, եւ նա կարող էր կախման մեջ հայտնվել եւ կորցնել տունը, հողը, այգին, անասունները, գործիքները: Այդ սկզբունքի շնորհիվ գյուղը նրան սատարել է, եւ նա չի կորցրել իր ունեցվածքը: Սա համայնքային կյանքի լավագույն օրինակներից է, որն այսօր Եվրոպայում կիրառվում է: Տեղական ինքնավարումը մեզ մոտ 3000 տարվա պատմություն ունի, եւ ցավովի է, որ իրավիճակն այդպիսին է: Ես դեռեւս բավարար չեմ համարում այն, ինչ արել եմ այդ գրքում, որովհետեւ եթե ժամանակը շատ լինի, ավելի ուշագրավ է խորը տեղեկություններ կհավաքեմ:

- Գիրքը շատ մեծ հետաքրքրություն է առաջացրել մեր ընթերցողների շրջանում: Պահանջարկը մեծ է, իսկ գիրքը չկա: Մանավանդ ներկայումս տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող գործընթացներում որոշում կայացնողները պետք է հնարավորություն ունենային ծանոթանալու այդ գրքին:

- Գիրքը 2008-ին ամբողջությամբ բաժանվեց մեծ համայնքների ավագանիների անդամներին, բնակիչներին, որից հետո նորից պահանջարկ կար: Երեւի ճիշտ է, որոշում կայացնողներին՝ կառավարության անդամներին, փորձագետներին պետք էր տալ, որովհետեւ կիրառելի շատ բան կա: Օրինակ, քաղաքային դատարանի, համապարտ երաշխավորության, համաբարության մոդելները: Այսօր տարբեր մասնագիտությունների տեր անձինք կազմում են միություններ, բայց արհմիություններ կարելի է ասել, չունենք: Իսկ եթե, ինչպես հիմում, այդ համաբարությունների ներկայացուցիչները քաղաքային խորհրդի մաս կազմեն, հավատացնում եմ, իրավիճակի շատ հետաքրքիր փոփոխություն կարող է լինել: Մեր անցյալի դրական օրինակներից մեկը՝ թագավորը իրավունք չի ունեցել իր սեփական արքունի դաստակերտ քաղաք գործ մտցնելու: Միայն արտաքին վտանգի դեպքում: Այսինքն, բանակի խառնվելը ներքին խնդիրների լուծմանը բացառվում էր: Կամ՝ Արծն քաղաքը 11-րդ դարում, այսօրվա տերմիններով ասած, ազատ տնտեսական գոտի է եղել: Եվ երբ արաբները

ոտնձգություն են կատարել, բնակիչներն այնքան սիրել են իրենց քաղաքը, այնքան գոհ են եղել իրենց կյանքից, որ ինքնուրույն, իրենց ուժերով պաշտպանել են քաղաքը: Այս օրինակով մենք մեկ դարով կանխել ենք արեւմուտքի համանման մոդելների՝ բերդաքաղաքների առաջացումը: Հետաքրքիր տեղական ինքնակառավարման մոդելներ են եղել, ասենք, եկեղեցու շնորհիվ ծխական համայնքների խորհուրդների ձեւավորումը, հոգեւորականի եւ ազատ քաղաքացու միավորումները, որոնց շնորհիվ հնարավոր է եղել մեր բնակավայրերի ինքնությունը պահպանել մինչեւ այսօր: Դա ուսանելի է, որովհետեւ եթե 2-3 հազար տարի իրեն արդարացրել է, ուրեմն հետահայաց կարելի է շատ մեծ դասեր քաղել:

- Կա՞ն արդյոք աղբյուրներ, որոնք դեռեւս չեք օգտագործել, եւ եթե հնարավոր լինի, կլրացնեք գիրքը:

- Կան աղբյուրներ, որոնք պարզապես ուղեցույցային են: Այն, ինչ հնարավոր է եղել, վերցրել եմ, բայց հետագա ուսումնասիրությունների համար կան անուղղակի աղբյուրներ: Դրանցում տեղական ինքնակառավարման, համայնքային կյանքի մասին ոչինչ չկա, բայց ինչպեսակամ կան, որոնց հետքերով գնալով կարելի է նոր աղբյուրներից նոր տեղեկություններ վերցնել: Գիրքը համալրելու խնդիր կա՝ այժմյան իրավիճակը ներկայացնելու առումով:

- Տեղական ինքնակառավարման մարմիններ՝ ոչ պոպուլյար թեմայի եւ ՀԼՄ-ների «հարաբերություններն» ինչպե՞ս եք գնահատում: Արդյո՞ք այսօրվա կյանքն արտացոլում է ՀԼՄ-ները:

- Եթե 100 տարի հետո փորձ արվի նայել, թե 21-րդ դարում տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում ինչպիսին է եղել, ինՖորմացիոն աղբյուրները կարող են լինել միայն կառավարության կամ ՏԻՄ-երի հաշվետվությունների մեջ: Իրական, ո՛չ իրավական, իրական եւ փաստական նյութերը, խնդիրները, որոնք պետք է քննվեն արդեն ՀԼՄ-ների կողմից, չեն գտնվելու, որովհետեւ ՀԼՄ-ներում այսօր, կարելի է ասել, բացակայում են տեղական ինքնակառավարման մարմինների եւ նրանց գործունեության մասին կյուրերը: Անդրադարձն այդ թեմային լինում է ընտրությունից ընտրություն կամ ՏԻ գործունեության մեջ ինչ-որ սենսացիոն կյուրի առկայության պարագայում, այսինքն՝ լուսաբանումը զուտ իրավիճակային է, ոչ՝ դրանից ավելի: Մինչդեռ այսօր Հայաստանում ստրատեգիական գործընթաց է տեղի ունենում՝ համայնքների խոշորացումը, որը շատ կարեւոր գործընթաց է: Թե ինչպես է ընթանում այդ գործընթացը, ինչ խնդիրներ են ի հայտ գալիս այն իրականացնելիս, արդյոք արդարացված է այդ ռեֆորմը, մեկ-երկու տասնամյակ հետո ինչ դրական արդյունքներ կամ բացասական հետեւանքներ այն կբերի՝ հարցեր են, որոնք պետք է բացահայտեն ՀԼՄ-ները: Իսկ նրանք անտարբեր են, իրենց համար դա հետաքրքիր չէ: Մինչդեռ խոշորացված համայնքների գործունեության մեջ կան շատ հետաքրքիր խնդիրներ, որոնք պետք է նրանք տեսնեն եւ լուսաբանեն: Արդեն այսօր կարելի է քննել, թե խոշորացված համայնքներն ինչ արդյունք ունեն: Կամ՝ ներկայացնել առաջիկայում խոշորացման ենթակա բնակավայրերի այսօրը եւ համեմատել այն հետագայում, արդեն խոշորացումից հետո ստեղծված իրավիճակի հետ: ՀԼՄ-ները քաղաքացիական հասարակության մաս են, անընդհատ պետք է խնդիրներ բարձրաձայնեն, ստիպեն եւ՛ կառավարությանը, եւ՛ ՏԻՄ-երին բարելավել իրենց աշխատանքի գործիքները:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՆՈՅՏԵՐԵՐՅԱԼՈՒՄ

2017թ. դեկտեմբերի 11-ին Նոյեմբերյանում տեղի է ունեցել Քաղաքացիների սպասարկման գրասենյակի (ՔՍԳ) պաշտոնական բացման արարողությունը:

Գրասենյակը հիմնադրվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ եւ Հայաստանում Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (ՇՀՀԳ) եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՀԳ) համաֆինանսավորմամբ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏՀԶՆ) հետ համատեղ:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, Տավուշի մարզպետ Յուլիա Աբովյանը, ԱՄՆ ՄՀԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիգորյան (տեսաուղերձ), Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության ծրագրի մասնագետ Սերգեյ Յուլիանիսյանը, ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի հայաստանյան թիմի ղեկավար Զաթրին Շեֆերը, Նոյեմբերյան համայնքի ղեկավար Կարեն Աբաջյանը, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

2015 թվականից ի վեր ծրագրի շրջանակներում հիմնվել են տասներեք գրասենյակներ Ծիսուհայր, Թումանյան, Աբովյան, Արտաշատ, Զառիթափ, Դեմազեն, Ուրցաձոր, Աշտարակ, Ալավերդի, Գորայք, Ամասիա, Արփի, Մեղրի եւ Վանաձոր համայնքներում:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնումը թույլ է տալիս «մեկ պատուհան, մեկ կանաչ» սկզբունքի համաձայն քաղաքացիներին մատուցել բարձրորակ ծառայություններ, բարձրացնել համայնքապետարանի աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, դյուրացնել համայնքապետարաններում իրականացվող վարչական գործընթացները: Զառիթափի սպասարկման գրասենյակը կապահովի համայնքային ծառայությունների մատուցումը «լավ կառավարման» սկզբունքների համաձայն:

Նոյեմբերյանի համայնքապետարանում է ՔՍԳ-ում աշխատանքները կիրականացվեն Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն ՀԿ կողմից ստեղծված Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) կիրառմամբ, որը որպես ՏԻՄ-երի համար մշակված տեղեկատվական համակարգ, թույլ է տալիս ապահովել տեղեկատվական հոսքերի ավտոմատացված կառավարում համայնքապետարանում: Համակարգը նպաստում է քաղաքացիների նկատմամբ ՏԻՄ-երի հաշվետվողականության եւ թափանցիկության աստիճանի բարձրացմանը, մատուցվող ծառայությունների վրա ծախսվող ծախսերի կրճատմանը: Համակարգի միջոցով հնարավոր է բնակիչներին մատուցել առցանց ծառայություններ, հետեւել դրանց ընթացքին, իսկ հարցերի դեպքում՝ առցանց դիմել համապատասխան մասնագետներին:

Վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում ՀԿՏՀ-ն կապահովի վարչական ծառայությունների մատուցում բնակիչներին անմիջապես բնակավայրերում, խոշորացված համայնքի արդյունավետ կառավարում, բնակավայրերի ինտեգրում եւ փոխգործակցություն մեկ միասնական տեղեկատվական հարթակի միջոցով:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Համայնք-ՀամաՏեղ» ամսաթերթը հրապարակում է տեղական ինքնակառավարման հայկական մոդելների մասին Արեւիկ Չարությունյանի «Պանկուից մեր օրերը» աշխատության ուշագրավ եւս մի քանի էջ՝ ամենեւին չսպառելով այն հսկայական հետաքրքիր նյութը, որ պարունակում է այս եզակի գիրքը:



Ժողովրդավարությունը եւ Կիլիկիան միջնադարում

Հայաստանում որպես միջնադարյան ժողովրդավարության լավագույն օրինակ անվերապահորեն կարող է դիտարկվել Կիլիկիայի Հայկական Պետությունը:

Միապետական Կիլիկիայում կենտրոնական կառավարչական համակարգը հին Հայաստանի համեմատ արդեն ունի նշանակալից առանձնահատկություն, պետական պաշտոններն այստեղ հանձնարարվում էին՝ առաջնորդվելով ոչ թե նշանակվողի այս կամ այն նախարարական տոհմին պատկանելու սկզբունքով, այլ, որպես կանոն, տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ըստ թեկնածուի արժանավորության: Ինչ վերաբերվում է համայնքների կառավարման մեջ շարքային քաղաքացու իրավունքին, ապա հենվելով Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքին», պատմաբան Ա. Սուքիասյանը իր «Կիլիկիայի հայկական պետության եւ իրավունքի պատմություն» աշխատության մեջ բովանդակալից կերպով ներկայացրել է այս կարեւոր խնդիրը:

Կիլիկիայի երեսուն գավառների կառավարող բարոններին (գավառապետերին) զուգահեռ գործել են «ծերակույտեր», այսինքն՝ համայնքներից ներկայացված ավագների խորհուրդներ: Ավագները մասնակցել են գավառի կառավարմանը: Գավառի կազմում գտնվող բազմաթիվ գյուղական եւ քաղաքային համայնքների ներքին կյանքը ինքնակառավարվել է տեղական ինքնավարության մարմինների կողմից: Զաղաքում կենտրոնական կառավարության ներկայացուցչի հետ մեկտեղ գործող ինքնավարության մարմինը եղել է քաղաքացիների դասային խորհուրդը, որը գլխավորել է քաղաքագլուխը:

Թե ինչպե՞ս է կատարվել դասային խորհրդի ընտրությունը, եւ դրանում համայնքի բնակիչներն ինչպիսի մասնակցություն են ունեցել, ցավոք, այս հարցի պատասխանը չգտնվեց ոչ սկզբնաղբյուրներում եւ ոչ էլ նշված գր-

քում: Սակայն առկա են հետեւյալ փաստերը, դասային խորհրդի հետ մեկտեղ քաղաքային բնակչության առանձին խավեր, մասնավորապես, վաճառականներն ու արհեստավորները, ունեին դասային ինքնավարության իրենց մարմինները՝ գիլդիաներն ու համքարությունները, իսկ օտարերկրացիները խոշոր քաղաքներում ինքնավարության իրավունքներով ունեին իրենց «գաղութներն» ու թաղամասերը, որոնք գլխավորում էին հյուպատոսները, «վիկարիոսները» եւ այլն: Այսինքն, քաղաքի դասային խորհուրդը կազմված է եղել պատկանելի քաղաքացիներից, ովքեր կամ ընտրվել են համայնքի կողմից, կամ ներկայացվել գիլդիաների եւ համքարությունների կողմից: Երկու դեպքերում էլ համայնքի շահերը պաշտպանվել են դասային խորհրդում:

Զաղաքում կենտրոնական կառավարության ներկայացուցչը՝ վերատեսուչը, օժտված է եղել նաեւ ոստիկանական ֆունկցիաներով: Եվ այդ գործում

քահանաները: Նրանք ակտիվ դեր են խաղացել իրենց ծխականների «մեղքերի» դեմ մղած պայքարում եւ տեղական իշխանության մեջ ու տեղական դատական մարմիններում իրենց մասնակցությամբ նպաստել հասարակական կարգի պահպանմանը: Համայնքի ավագանու խորհրդի իրավասությունից դուրս համեմատաբար մեծ հանցանքները քննվել են քաղաքային դատարանում: Համայնքի կյանքում քաղաքացու ներգրավվածության տեսանկյունից բավականաչափ ուշագրավ երեւոյթ են քաղաքային դատարանները, որոնք Կիլիկիայում կոչվել են «բուրջեսներ»: Համայնքի քաղաքացիները անմիջական մասնակցություն են ունեցել տեղական դատարանի ձեւավորման եւ կենսագործունեության մեջ: Զաղաքային դատարանը քննել է համայնքի բնակչության քաղաքացիական վեճերը եւ մանր հանցագործությունների վերաբերյալ գործերը, բացառելով ազնվականներին, որոնք գործերը անցնում էին իշխանական դատարաններ:



Դատավարությունը իրականացվել է հրապարակային եւ բանավոր: Զաղաքային դատարանները եղել են կոլեգիալ, կազմված նախագահից եւ երկու կամ ավելի ատենակալներից: Դատավարությանը ներկա են գտնվել նաեւ «նոմիկուսը» կամ «նոտարը», այսինքն, քարտուղարը, որը կազմել է դատական արձանագրությունները: Դատավարությունը եղել է անվճար: Ծախսերը հոգացել է քաղաքային խորհուրդը՝ քաղաքացիներից հավաքվող հարկերի հաշվին: Անագատ՝ ճորտ գյուղացիներին դատելու իրավունք են ունեցել նրանց տեղերը՝ ազնվականները: Նրանք կարող էին մարմնական պատիժների ենթարկել ճորտերին եւ արտաքսել նրանց:

Ինչպես ցույց է տալիս Կիլիկիայի օրինակը, Հայաստանի տարբեր երկրամասերում, գավառներում եւ համայնքներում ոչ տնտեսության զարգացումը եւ ոչ էլ կառավարման տեսակները նույնը չեն եղել: Համայնքների համաչափ տեղաբաշխման եւ զարգացման մասին խոսք լինել չի կարող: Երկիրը մի միասնություն չի ներկայացրել քաղաքական, բնակչության մասին եւ աշխարհագրական տեսակետներից, եւ համայնքների առաջացման ու զարգացման պայմանները ամենուր նույնը չեն եղել:

Ըստ «Պանկուից մեր օրերը» գրքի: Հատվածները տպագրվում են հեղինակի համաձայնությամբ:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Բյուջեի հանրային քննարկումները համայնքի բնակիչների եւ ՏԻՄ-երի միջեւ համագործակցության մի ձեւ է, որը հնարավորություն է տալիս նպատակային ու հասցեական պլանավորել ՏԻՄ-երի տարեկան գործունեությունը՝ բնակիչների իրական կարիքներին եւ ակնկալիքներին համապատասխան: Համայնքներում բյուջեի հանրային քննարկումներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագիտական թիմը ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում թիրախային 50 համայնքների աշխատակազմերին ցուցաբերում է համապատասխան տեխնիկական խորհրդատվություն եւ աջակցություն:

2018թ. բյուջեի հանրային քննարկումների մեկնարկը տրված էր դեռեւս նոյեմբեր ամսին: Դեկտեմբեր ամսվա ընթացքում բյուջեների հանրային քննարկումներ անցկացվեցին ՀամաՏեղ ծրագրի թիրախային մոտ 30 համայնքներում: Այս հանրային քննարկումներին բնորոշ էր կազմակերպչական ու մասնագիտական բարձր մակարդակը (համայնքների աշխատակազմերի կողմից կազմվել էին 2018թ. հակիրճ բյուջեների նախագծերը, մասնակիցների համար պատրաստվել էին ցուցադրական ու տպագրական նյութեր եւ այլն): Համայնքների բնակիչների շրջանում նկատվում էր մասնակցային բավականին նկատելի ակտիվություն, որը կարծես թե դրական տեղաշարժ է անցյալ տարիների համեմատ. բնակիչը սկսել է հետաքրքրություն ու շահագրգռվածություն ցուցաբերել իր համայնքի, համայնքային խնդիրների լուծման նկատմամբ:

2018թ. բյուջեի հանրային քննարկումների հետաքրքիր նախադեպ դիտվեց Աշտարակ համայնքում, որտեղ բյուջեի նախագիծը հանրային քննարկման դրվեց հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքում, Ֆեյսբուքյան, թվիթթյան սոցիալական էջերում: Դրանցում շրջանառվում էին տարբեր մեկնաբանություններ, կարծիքներ ու առաջարկություններ, որոնց ուշի-ուշով հետեւում էին տեղական իշխանության աշխատակազմի մասնագետները:

2017թ. վերջում նոր ձեւավորված բազմաբնակավայր շատ համայնքներում 2018թ. բյուջեի նախագծի մշակման, հանրային քննարկումների կազմակերպման եւ անցկացման աշխատանքները դեռեւս ընթացքի մեջ են, եւ դրանք պլանավորվում են գալիք տարվա հունվար ամսին:

2018թ. բյուջեների նախագծերի հանրային քննարկումները ցույց են տալիս, որ համայնքային խնդիրները եւ դրանց լուծման համար ՏԻՄ-երի անելիքները դեռեւս շատ են, բյուջեներում նախանշված ծրագրերի իրականացման արդյունքներից բնակիչների ակնկալիքները՝ մեծ, իսկ ՏԻՄ-երի առկա ռեսուրսները եւ ժամանակը՝ ցավոք, սուղ:

ՀՖՄ փորձագիտական թիմ



«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթը
Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Համայնքների
ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրասենյակի վկայական՝
թիվ 03U063471,
տրված՝ 06. 02. 2004 թ.

Թերթը հրատարակվում է Ամերիկայի
ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
գարգացման գործակալության
օժանդակությամբ իրականացվող «Հանրային
մասնակցություն տեղական
ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի
շրջանակներում: Այստեղ արտահայտված
տեսակետները միմյան հեղինակներին են եւ
պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ
կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՎԱՀԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՎԱՀՐԱՄ ԸՆԴՅԱՆՅԱՆ
ԱԲՐԱՀԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՐԻՍ ՆԱՎԱՍՏՐԳՅԱՆ
ՀՈՒՓՍԻՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴՎԱԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԸՆԱՐԻՎ ԱՅՎԱԶՈՒԿՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ԻՅՅՐԱՊԵՏՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝
Խմբագիր
ԱՐԵՎԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր հասցեն՝
Երեւան, Երվանդ Զոհարի 20,
4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ. փոստ՝ info@cfomail.am
Կայք՝ http://cfomail.am/
Տպագրված է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում,
ք. Երեւան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: